# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 46

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին
3.Ալագյազ համայնքի վարչական բնակավայրերի դպրոց հաճախող 1-ին դասարանի երեխաների համար պայուսակների և գրենական պիտույքների ձեռքբերման համար գումար հատկացնելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ
ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ
ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ
ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ
ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՄՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 47

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2020 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Ալագյազ համայնքի բյուջեից փոխանցվել է նախագծանախահաշվային աշխատանքների փորձաքննության ծառայության գումարը՝ որպես կառավարության մասնաբաժին, մինչև տվյալ գումարի հատկացումը կառավարության կողմից և հաշվի առնելով, որ գումարը գանձապետարանի կողմից հաշվանցվել է Ալագյազ համայնքի 2021 թվականի ֆոնդային բյուջե՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ալագյազ համայնքի 2021թ. բյուջեի եկամտային մասի «այլ եկամուտներ» բաժնին ավելացնել 173552 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ,
2.Ալագյազ համայնքի 2021թ. ֆոնդային բյուջեի «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին ավելացնել 173552 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱՂԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 48

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հավանություն տալ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի Սադունց վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-009-0017-0014 ծածկագրով 0.13հա գյուղատնտեսական արտադրական նպատակային նշանակությամբ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու, որպես բնակելի կառուցապատման նպատակային նշանակության հողամաս:
2.Համայնքի ղեկավարի կողմից կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴՈՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 49

## ԱԼԱ́ԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 18-ի N6 որոշումը և հաշվի առնելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից մինչև 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել Ալագյազ համայնքի վարչական բնակավայրերի 1-ին դասարան հաճախող երեխաների համար պայուսակների և գրենական պիտույքների ձեռքբերման համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ